

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ battery modul SYBT5-ներ , UPS -2000VA Online վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 20.08.2024թ. ժ. 17:00
 - Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը –PROC20082024: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել «.rar» տարբերակով, կոդավորված, իսկ կոդը ուղարկել procurement@inecobank.am էլ Հասցեով մինչև 21.08.2024թ ժ.17:00
 - Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով
 - ԳՆՀ կոդը –PROC20082024 ի battery modul SYBT5-ներ , UPS -2000VA Online
 - մասնակցի անվանումը,
 - ներկայացման ամսաթիվը,
 - ստացող՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:
3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝
Կոնտակտային անձ՝
Գնումների բաժին՝ Գևորգ Գասպարյան+374 43002272
4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ:Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և 'Հրապարակային սակարկությունների մասին' ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝
 - Գնառաջարկ,
 - Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն
 - Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ)
 - Բանկային երաշխիք (կանխավճարի դեպքում)
 - Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոններին համաձայնությունը
 - Պետական և հարկային գրանցման փաստաթղթերի վկայականներն ու պատճենները
8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:
13. Վճարումները կատարվում են Ինեկոբանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

ԳՆԱՌԱՋԱՐԿ

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ի battery modul SYBT5-ներ , UPS -2000VA Online գնառաջարկների ներկայացման հարցում

Հ/Հ	Անվանումը	Տեսակ	Քանակը	Միավորի գինը Ներառյալ ԱԱՀ
1	UPS -2000VA Online	UPS -2000VA ,Online	10 հատ	
2	APC Symmetra LX UPS	battery modul SYBT5	8 հատ	

Առաջարկում ենք կատարել մատակարարումը _____ օրացուցային օր ժամանակահատվածում:

Պահանջվող կախնավճար _____ դրամ:

_____ Մասնակցի/կազմակերպության անվանումը

_____ Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, սպորազբոյությունը՝

" " _____ 2024թ

Կ.դ